## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

## ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ՝ ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ-ՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ՝ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-Ի՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-ՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈ-ԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 75 ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱ-ՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄԸ ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 2009 թվականի հունիսի 8-ի N2-0196 դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 33 հոդվածի 1-ին մասին համապատասխան ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից (12.11.2009թ. N 2-0196 գրություն) հետ վերցնելու կապակցությամբ ուժը կորցրած ճանաչել «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 75 հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ընդունված՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի հունիսի 30-ի ՍԴԱՈ-59 աշխատակարգային որոշումը:

2. ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմին՝ սահմանված կարգով վերադարձնել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 2009 թվականի հունիսի 8-ի N 2-0196 դիմումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

13 նոյեմբերի 2009 թվականի
ՍԴԱՈ - 99